գութիւն, ընծաեցար և ընծաեցեր, փախար և փախուցեր։ Աճեցար անաճդ, զաւրացար զաւրութիւնդ, շնորհ ընկալար շնորհքդ, վարդապետեցար վարդապետդ, հնազանդեցար անհընազանդսն, լրացար սուրբդ, վկաեցար ճշմարիտդ, լրացար լիդ՝ և ընկալար անկարաւտդ, պահեցեր պաքդ, փորձեցար անփորձդ, մտեր ի հարսանիսն անհարսնացելոյն ծընունդսն, բաժակացուցեր զինքնաբուխն, տրուիչդ որթոյ և որթդ ճշմարիտ։ Դարձար՝ մտեր՝ ընթերցեր՝ մեկնեցեր՝ եղար՝ երանեցեր, իջեր, սրբեցեր, հաներ, բացեր, յարուցեր, ընթերցար, վաստակեցար, ի վերա աւդտ և ջրոյ գնացեր, ննջեցեր, ննջեցուցեր, կերակրեցեր՝ արբուցեր՝ զամենայն ինչ արարեր զքոյդ և զմերս, ցուցանելով յերկուց մի գոլ բնութիւն։ Աճար ի զենուին, արձակեցար ըստ մեզ՝ կապեալդ անլոյծ և կապեցար մշտական, մանաւանդ եթէ զմեզ կապեցեր զլուծեալքս ի մեղաց։ Կոչեցար հարսանիս, առաքեցեր զծառայսն քո կոչել զհրաւիրեալսն, որք յետս կացեալք՝ ժողովելով ի ցանկէ և յանցէ, և լցաւ առաքաստդ կաթուղիկէ հաւաքեալք ի [թղ·15բ] բոլոր ազանց։ Իսկ այս ազդ կոչեալ երիցս և ոչ եկեալ, այլ դանալից արարեալ և սպանեալ զկոչողսն՝ հրաժարելով յանդս և ի հարկս և ի հարսանիսս՝ մընալով ի խաւարի յետ լու-